ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

2 մարտի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

28
(2878)

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՀՖՖ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՈՐԴԻՆ ԱԶԱՏՎԵԼ Է ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՈՒՆԻՑ

Նիկոլ Փաշինյանի ընտանեկան թերթի նախկին լրագրող, այսօր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահ Արմեն Նիկողոսյանի որդին չի ծառայել բանակում: Այս տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատել են ՀՀ պաշտպանության նախարարությունից:

«Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 14-ին հարցում էր ուղարկել ՀՀ ՊՆ Սուրեն Պապիկյանին՝ հետեւյալ բովանդակությամբ. «ArmLur.am-ը տեղեկացել է, որ ՀՖՖ փոխնախագահ Արմեն Նիկողոսյանի որդին՝ Էդգար Արմենի Նիկողոսյանը (ծնված 23.07.1995 թվ.-ին, գրանցման հասցեն՝ Երեւան, Դեմիրճյան փ. 17Ա 15) ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից՝ ֆուտբոլային կարիերա շարունակելու հիմնավորմամբ, սակայն հետագայում նրան ակտիվ ֆուտբոլում չենք տեսել: Ի՞նչ հիմնավորմամբ է ծառայությունից ազատվել Էդգար Նիկողոսյանը: 2018 թվականից հետո, երբ շատ պաշտոնյաների որդիների՝ զինծառայությունից ազատման փաստաթղթերը սկսեցին ուսումնասիրվել, արդյոք Արմեն Նիկողոսյանի որդու ծառայությունից ազատման փաստը ստուգվե՞լ է. եթե ոչ, ինչու՞»:

Ի պատասխան, ՊՆ-ից հայտնել են. «Նիկողոսյանը օրենքով սահմանված կարգով ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից»: Իսկ թե ինչ հիմքով, ՊՆ-ից հրաժարվել են պատասխանել՝ մատնանշելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Արդյոք 2013-ին 18-ը բոլորած Էդգար Նիկողոսյանն իսկապես ֆուտբոլային կարիերա է ունեցել եւ ունի՞. փնտրեցինք տեղեկություններ, չգտանք: Զանգահարեցինք հորը՝ Արմեն Նիկողոսյանին, որը, սակայն, հրաժարվեց զրուցել մեզ հետ. չկարողացանք պարզել, թե ինչ հիմքով է որդին ազատվել զինծառայությունից, եւ ինչու չի զբաղվել հետագայում ֆուտբոլով, եւ ամենակարեւորը՝ ում միջնորդությամբ է ազատվել որդին բանակից:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանը եւ նրա թիմակիցները ԱԺ ամբիոնից հաճախ խոսում են, թե մարդիկ նախկինների օրոք փողով բանակից ազատվել են: Ստացվում է՝ նաեւ իր թերթի նախկին աշխատակցի որդին է նույն հիմքով ազատվել ծառայությունից, եթե Փաշինյանը դա էլ չէր ստում: Իսկ ինչ վերաբերում է այսօրվա փաշինյանական իշխանությանը, ապա նրանց օրոք ՔՊ թիմակիցներից շատերը արհեստական հիմքերով ազատվել են պարտադիր զինծառայությունից:

Օրինակ՝ ՀՀ արտաքին գործերի երիտասարդ փոխնախարար Վահան Կոստանյանը բանակից ազատվեց, որ գիտությամբ զբաղվի, սակայն պետական պաշտոնյա է: Զինծառայությունից ազատված են ՔՊ-ական պատգամավոր Վահե Ղալումյանի երկու որդիները՝ Աշոտ եւ Վլադիմիր Ղալումյանները: Հովիկ Աղազարյանի կրտսեր որդին՝ Հովսեփ Աղազարյանը եւս չի ծառայել: ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի 2 որդիները նույնպես ազատվել են ծառայությունից, եւ այս շարքը դեպի անվերջություն կարող ենք շարունակել:



ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իր նորանշանակ խոսնակ Նելլի Ղուլյանից պահանջել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն անդամակցելու դիմում ներկայացնի: Դա արել է հատկապես այն բանից հետո, երբ թիմակիցները նրա դեմ դավեր էին նյութում, թե ՔՊ-ին հավատարիմ չէ, շեղվել է կուսակցության հռչակած սկզբունքներից: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցեցին, որ ԱԺ խոսնակի աշխատասենյակի պատին բերել եւ Նիկոլ Փաշինյանի լուսանկարն են փակցրել: «Ժողովուրդ» օրաթերթն այս տեղեկության վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար դիմեց Նելլի Ղուլյանին. վերջինս ասաց, որ ինքը ՔՊ աջակից է, ուստի չի բացառում անդամակցությունը, սակայն Սիմոնյանի կողմից նման պահանջ իր առջեւ չի դրվել: «Ոչ մի պահանջ Պարոն Սիմոնյանը չի ներկայացրել, ինձ համար ծիծաղելի է՝ որտեղից են նման տեղեկություններ տարածվում: Ես կարող եմ ասել, որ 2018թ-ից ի վեր սատարել եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը որպես քաղաքացի եւ դրա համար չեմ բացառում իմ անդամակցությունը. դա եղել է միշտ իմ մտքին, բայց ԱԺ նախագահի կողմից երբեւէ նման պահանջ ինձ չի ներկայացվել»,-ասաց նա: Ինչ վերաբերում է իր աշխատասենյակում Նիկոլ Փաշինյանի լուսանկարը փակցնելուն, ԱԺ նախագահի խոսնակն ասաց. «Ես ասացի, որ հեղափոխությանը սատարում եմ, ՔՊ-ին սատարում եմ, դրա համար սա շատ նորմալ եմ համարում»: Նշենք, որ Նելլի Ղուլյանը ԱԺ նախագահի խոսնակի պաշտոնը զբաղեցնում է այս տարվա հունվարից. մինչ այդ զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի մամուլի քարտուղարի պաշտոնը: Հավելենք, որ Ալեն Սիմոնյանը նույնիսկ խոստացել է խոսնակին ԱԺ պատգամավոր դարձնել մյուս ընտրություններում:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը հայց է ներկայացրել՝ ընդդեմ Երեւանի ավագանու: Այսպիսով, դեռ փետրվարի 7-ին կայացած նիստում Երեւանի ավագանին որոշեց ընդդիմադիր «Մայր Հայաստան» խմբակցության 2 անդամների՝ Նարինե Հայրապետյանին եւ Սոնա Աղեկյանին զրկել մանդատից: Ավագանու ընդդիմադիր անդամներին մանդատից զրկելու համար քաղաքային իշխանությունները հիմք էին վերցրել նախագծերի քվեարկություններին չմասնակցելը: Սոնա Աղեկյանը եւ Նարինե Հայրապետյանը թեեւ ներկայացել էին նիստերին, սակայն, որպես քաղաքական բոյկոտի տարբերակ, չէին մասնակցել նախագծերի քվեարկություններին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Մայր Հայաստան»-ը օրեր առաջ՝ փետրվարի 29-ին, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ վիճարկելու Սոնա Աղեկյանին մանդատից զրկելու որոշումը: Մեզ «Մայր Հայաստան»-ից հայտնեցին, որ առաջիկայում Նարինե Հայրապետյանի մասով եւս հայց են ներկայացնելու. քանի որ վերջինս երկրում չէ, թղթաբանության հետ կապված խնդիրներ են առաջացել, ու գործընթացը ձգձգվել է: Տեսնենք՝ փաշինյանական դատարանները ինչ վարք կդրսեւորեն:

Քանի որ իշխող ուժը՝ ՔՊ-ն, ԱԺ-ում չմասնակցեց ՍԴ դատավորի պաշտոնում դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրված Դավիթ Բալայանի թեկնածության քվեարկությանը, դատավորները էլի պետք է հավաքվեն: Կրկին պիտի ՍԴ դատավորի թեկնածու ընտրեն եւ ուղարկեն ԱԺ-ի հաստատմանը: Դատական համակարգում ակտիվ քննարկում են, թե ում ընտրեն, որ ՔՊ-ի սրտով լինի: Քաղաքական իշխանությունը իր «սրտի» թեկնածուին է փորձում առաջ տանել, իսկ դատական համակարգը չի հանձնվում եւ ամեն գնով իր թեկնածուին է առաջ տանելու: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, կրկին առաջադրվի, որին դատավորները մի անգամ արդեն մերժել էին: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս հարցը անձամբ նրանից ճշտել, սակայն մեր հաղորդագրություններն ու զանգերը մնացին անպատասխան: Հիշեցնենք, որ ՍԴ դատավոր դառնալու համար դատավորներին էր դիմել Երեւան քաղաքի դատավոր Դավիթ Բալայանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, որը մի քանի ամիս առաջ էր ԲԴԽ-ից գնացել ու ԱԺ-ում ընտրվել Վճռաբեկ դատարանի դատավոր: Դատավորները 158 ձայն տվեցին Դավիթ Բալայանին, սակայն Բալայանին ՔՊ-ն չընտրեց: Ուստի, հերթական անգամ դատավորները հավաքվելու են առաջիկայում: Հիշեցնենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները: Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ

# ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը բազմաթիվ անգամ հայտարարել է իր պատրաստակամությունը եւ ցանկությունը՝ համագործակցելու եվրոպական քաղաքական ընտանիքի անդամների հետ. Ազգային ժողովում խորհրդարանական ճեպազրույցների ժամանակ այս մասին ասաց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը՝ պատասխանելով հարցին, թե ինչու է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը եվրոպական կուսակցական միությունների գաղափարախոսությունները ընդունակել, քաղաքական ուժը նպատակ ունի արդյոք առաջիկայում որեւէ կուսակցության անդամակցել:**

Պատգամավորը նախ նշեց, որ ՔՊ-ն յուրաքանչյուր հինգշաբթի իր գրասենյակում ունենում է կուսակցության նախաձեռնող խմբի հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են ամենատարբեր օրակարգային հարցեր՝ կապված թե՛ կուսակցության զարգացման, թե՛ առհասարակ կուսակցության դերի եւ նշանակության հետ:

«Այդ համատեքստում, բնականաբար, մենք նաեւ քննարկում ենք մեր համագործակցությունները համաշխարհային տարբեր կուսակցական միավորների հետ, որոնց հետ ունենք գաղափարական ընդհանրություններ, եւ, քանի որ բոլորի համար պարզ է, որ մենք ոչ մեկ անգամ ենք հայտարարել մեր պատրաստակամությունը եւ ցանկությունը համագործակցելու եվրոպական քաղաքական ընտանիքի անդամների հետ, բնական եմ համարում քննարկումները եվրոպական քաղաքական կուսակցությունների միավորումների վերաբերյալ, որպեսզի մեր կուսակցականները եւ բոլորը հստակ պատկերացումներ ունենան եվրոպական կուսակցությունների գաղափարախոսությունների, մեր ընդհանրությունների եւ համագործակցության հնարավորությունների մասին»,- ասաց Հովհաննիսյանը:

Ճշգրտող հարցին՝ հնարավոր է արդյոք անդամակցություն որեւէ եվրոպական կուսակցության, Հովհաննիսյանը պատասխանեց՝ չի բացառում:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, Պետաիրավական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանն իր հերթին նշեց, որ բավականին երկար ժամանակ ՔՊ-ն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում մասնակցում է տարբեր քաղաքական խմբերի ձեւաչափով քննարկումներին:

«Մեր պատվիրակության մի մասը թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխող խմբակցություններից, ընդգրկված է Եվրոպական ժողովրդական կուսակցության պատգամավորական խմբում: Օրինակ՝ ՀՅԴ-ն սոցիալիստների խմբում է եւ սոցիալիստների համաեվրոպական կուսակցական շարժման մաս է, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը եղել է Ժողովրդավարների եւ լիբերալների ալյանսի մաս, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մաս է կազմել կոնսերվատորների խմբին: Այսինքն՝ սա քննարկում չէ, որ աննախադեպ բնույթ է կրում, սա քննարկում է, որը ինչ-որ տեղ ուշացած է: Մենք բավականին երկար ժամանակ քննարկել ենք այս հարցը եւ շարունակում ենք քննարկումներն ու ակտիվ աշխատանքներ ենք իրականացնում այս ուղղությամբ»,-եզրափակեց Վարդանյանը:

Փետրվարի 29-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստ, որը վարել է վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Քննարկվել են եվրոպական կուսակցական միությունների գաղափարախոսությունները:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ԿԱՐԾԻՔ

# ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԲԱԼԱՆՍԱՎՈՐՎԱԾ

**Հայաստանի ազգային ժողովի ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը համարում է, որ ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է լինի բալանսավորված:**

Մամիջանյանը նման դիրքորոշում հայտնեց խորհրդարանական ճեպազրույցում՝ անդրադառնալով ԵՄ անդամակցության հնարավոր թեկնածու դառնալու վերաբերյալ հարցին:

«Ես համարում եմ, որ ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է լինի բալանսավորված, այնպիսին, ինչպիսին եղել է: Ես պատիվ ունեմ ներկայացնելու մի քաղաքական միավոր (Հայաստանի հանրապետական կուսակցություն), որը պատասխանատվություն է կրում Հայաստան-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրման եւ վավերացման մեծ մասի համար»,-ասաց Մամիջանյանը:

Նա հավելեց՝ երկրորդ նախագահ Սերժ Սարգսյանի վարած արտաքին քաղաքականությունից կարելի է ենթադրել, որ նրա քաղաքական թիմի անդամը բալանսավորված արտաքին քաղաքականության կողմնակից է:

«Յուրաքանչյուրը դաշնակցային հարաբերություն, յուրաքանչյուր գործընկերային հարաբերություն պետք է ծառայի Հայաստանի շահին: Անվտանգություն պետք է որոնես այնտեղ, որտեղ անվտանգություն գեներացնող են, ոչ թե սպառող, տնտեսական զարգացում պետք է որոնես այնտեղ, որտեղ դու մրցունակ ես: Օրենքի գերակայություն, անկախ դատական համակարգ, ժողովրդավարություն պետք է որոնես այնտեղ, որտեղ դա լավ է զարգացած: Եվ յուրաքանչյուր գործընկերոջից կամ դաշնակցից պետք է պայմանագրային, գործընկերային, դաշնակցային հիմունքներով կարողանաս ստանալ իմ նշածներից յուրաքանչյուրը քո երկրի համար»,-ասաց Մամիջանյանը:

Նա կարեւորեց Հայաստանի արտաքին քաղաքականությունը կառուցելը՝ հաշվի առնելով տարածաշրջանը, աշխարհաքաղաքական իրավիճակը եւ այլ գործոններ:

Մամիջանյանը համեմատությամբ խոսեց. երկու փիղ իրար հետ մենամարտում են, երբեք չես կարող ասել, թե որ փիղը կհաղթի, բայց այն վայրը, որտեղ այդ մենամարտը տեղի է ունենում, վստահաբար ավերակների է վերածելու: Նա մեղադրեց Հայաստանի իշխանությանը վարած քաղաքականության շատ ասպեկտներով այդտեղ տանելու համար:

Նա շեշտեց՝ երբեւէ չի հանդուրժի, որ իր հայրենիքը դառնա աշխարհաքաղաքական հաշիվ պարզելու վայր:

Ավելի վաղ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը լրագրողների հետ զրույցում, անդրադառնալով հարցին, թե Հայաստանը պատրաստ է արդյոք ԵՄ-ի անդամության թեկնածու դառնալուն, ըստ էության, չէր բացառել դա:

## ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Ռենդ Փոլը դատապարտել է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից F-16-ների օգտագործումը 2020 թվականին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակումներում. այս մասին հայտնում է ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը:

Սենատորը կոչ է արել ընդունել բանաձեւը՝ Թուրքիայի կառավարությանը F-16-ների եւ պաշտպանական այլ ապրանքների վաճառքի համար Կոնգրեսի անհամաձայնության վերաբերյալ:

Թուրքիային F-16-ի վաճառքը արգելափակելու բազմաթիվ պատճառների թվում Փոլը հիշեցրել է Հայաստանի պաշտպանության նախարարությունը պնդումը, որ 2020 թվականի սեպտեմբերի 29-ին թուրքական F-16-ը Հայաստանի օդային տարածքում խոցել է հայկական ՍՈՒ-25 ինքնաթիռ: «Թուրքիան սերտորեն կանգնած է եղել իր դաշնակից Ադրբեջանի կողքին տարածաշրջանն իրեն հպատակեցնելու իր ջանքերում՝ տրամադրելով մարտական անօդաչու թռչող սարքեր, ռազմական տեխնիկա, ուսուցում եւ, եթե հավատալու լինենք Հայաստանի կառավարությանը, ուղղակի մարտական աջակցություն: Ուրեմն մեր ինքնաթիռները՝ F-16-երը, որ տալիս ենք թուրքերին, փաստացի օգտագործվում են Հայաստանի հետ մեկ այլ պատերազմում»,-ասել է սենատորը:

Նա շեշտել է, որ 2020-ի պատերազմում եւ 2023-ին Ադրբեջանի հետագա ռազմական գործողությունների հետեւանքով զոհվել են հազարավոր մարդիկ, ստեղծվել է հումանիտար աղետ՝ ստիպելով ավելի քան 100 հազար մարդու տեղահանվել:

Սենատոր Փոլի բանաձեւը ստացել է երկկուսակցական աջակցություն սենատորներից: Բանաձեւը, սակայն, ընդունվելու համար բավարար ձայներ չի ստացել:

## ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն Էրբիլում հանդիպում է ունեցել Իրաքյան Քուրդիստանի նախագահ Նեչիրվան Բարզանիի հետ:

Նախագահի աշխատակազմից հայտնում են, որ ողջունելով Հայաստանի նախագահի պաշտոնական այցը՝ Նեչիրվան Բարզանին ընդգծել է, որ նմանօրինակ այցելությունները նպաստում են ոչ միայն երկկողմ, այլեւ տարածաշրջանի երկրների միջեւ հարաբերությունների սերտացմանն ու զարգացմանը:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ նշել, որ բարձր մակարդակի փոխայցելությունները դրականորեն նպաստում են ինչպես ժողովուրդների միմյանց ճանաչողությանը, այնպես էլ խթանում տնտեսական, մշակութային, տուրիստական, գործարար եւ այլ ոլորտներում առկա կապերի ամրապնդումն ու նոր շփումների ձեւավորումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են տնտեսության, բարձր տեխնոլոգիաների, թվային կառավարման, տուրիզմի, կրթության եւ գիտության ու այլ ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի իրականացման վերաբերյալ հարցեր:

## ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ՇՓՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանն ընդունելի է համարում Հայաստան-Ադրբեջան ցանկացած բանակցություն, սակայն կարծում է, որ Արեւմուտքի միջնորդությամբ վերջերս կայացած բանակցություններից գլոբալ արդյունքներ պետք չէ ակնկալել:

Օհանյանը նման դիրքորոշում հայտնեց խորհրդարանական ճեպազրույցում՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք Գերմանիայի միջնորդությունը կարող է արդյունավետ լինել:

«Ընդհանուր առմամբ, ցանկացած բանակցություն ավելի ընդունելի է, քան պատերազմական գործողությունները»,-ասաց Օհանյանը՝ կարեւորելով ցանկացած շփում:

Վերջերս Գերմանիայում Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների բանակցությունների արդյունքից ընդդիմադիր խմբակցության ղեկավարը գոհ չէ: «Պայմանավորվել են արարողակարգային խոսքերով արտահայտվել՝ շարունակել բանակցությունները: Պարզ չէ, թե որոնք են սկզբունքներն ու հարցերի հերթականությունը»,- նշեց պատգամավորը:

Նա նկատեց, որ Ադրբեջանի իշխանությունները, մի կողմից, անընդհատ պնդում են, թե միջնորդ պետք չէ՝ այդպիսով փորձելով ճնշում գործադրել հայկական կողմի վրա, մյուս կողմից՝ շատ խորամանկ կերպով օգտագործում են թե՛ արեւմտյան, թե՛ հետխորհրդային հարթակը, որ իրենց շահերն առաջ տանեն:

«Կարծում եմ, որ, իհարկե, արեւմտյան հարթակում մենք ունենք բարեկամական երկրներ, բայց որեւիցե երկիր այստեղ տեղում մեզ աջակցելու այնքան մեծ հնարավորություններ չունի, բացի դիտորդական առաքելությունից: Այս բանակցություններից գլոբալ առումով արդյունքներ ակնկալելը, գտնում եմ, որ այնքան էլ հուսադրող չէ»,-եզրափակեց Օհանյանը:

## ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբեջանում հատուկ ջոկատայինների զորավարժություններ են անցկացվում:

Ինչպես հայտնում է ԱՊԱ-ն՝ Ադրբեջանի ՊՆ-ին հղումով, հատուկ նշանակության ստորաբաժանումների մասնակցությամբ շարունակվում են մարտավարական եւ հատուկ զորավարժությունները՝ «Մարտական ??գործողություններ իրականացնել ձնակույտի եւ սաստիկ ցրտահարության պայմաններում» թեմայով:

«Բարձրավանդակում դահուկների վրա մարտավարական վերադասավորումներ կատարած հատուկ նշանակության ջոկատները կատարել են ժայռամագլցման եւ ձնառատ տեղանքում խոչընդոտների հաղթահարման, վիրավոր զինվորին առաջին բուժօգնություն ցուցաբերելու, դժվար տեղանքների համար նախատեսված մեքենաներով նրան տարհանելու եւ հատուկ նշանակության այլ առաջադրանքներ»,- մեջբերում է ՁԼՄ-ն:

ՄԱՐՏԻ 1

# ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈՒՅԶԵՐԻ ՎՐԱ ԽԱՂԱԼՈՎ

**«Մարտի 1-ը իշխանության է բերել՝ հիշում են, Սումգայիթը կարող է զրկել՝ չեն հիշում»,- Facebook-ի իր էջում գրել է Yerevan.today-ի խմբագիր Սեւակ Հակոբյանը:**

Նա, մասնավորապես, նշել է. «Մարտի 1-ն է՝ գարնան առաջին օրը: Իշխանավորների համար իբր տխուր օր է. 10 զոհեր, հայի արյուն, կյանքեր եւ այլն:

2 օր առաջ Սումգայիթյան ջարդերի տարելիցն էր, երբ ադրբեջանական իշխանությունների կողմից պետական մակարդակով կազմակերպված քաղաքի հայ ազգաբնակչության սպանություններ տեղի ունեցան եւ զանգվածային տեղահանություն: Դա եղել է 1988 թ. փետրվարի 27-ից 29-ը ընկած ժամանակահատվածում: Հայ ազգաբնակչության դեմ իրականացրած այս պետական հանցագործության նպատակն էր կանխել արցախյան շարժումը, կանխել արցախյան ազատագրական պայքարի տարածումը:

Ոճրագործությունը ծրագրավորված էր, մարդասպանների մոտ հայերի բնակարանների ցուցակներն էին, սցենարը նախապես մշակված էր, դերերը բաժանված՝ սպանություն եւ ջարդեր իրականացնողներ, թալանողներ, ունեցվածք ոչնչացնողներ, հանցագործության հետքերը վերացնողներ, ոճիրն իրականացնելու համար արտադրամասերում մետաղաձողերի եւ այլ գործիքների պատրաստում, թմրանյութերի եւ ոգելից խմիչքի բաժանում. այդ ամենը բացահայտվել ու դատապարտվել է միշտ: Անգամ ԽՍՀՄ պաշտոնական տվյալներով՝ մի քանի տասնյակ, իսկ ոչ պաշտոնական՝1000-ից ավելի սպանվածներ, որոնց մեծ մասը խոշտանգումներից ու կտտանքներից հետո ողջակիզված, հազարավոր վիրավորներ, հարյուրավոր բռնաբարվածներ, այդ թվում՝ մեծ թվով անչափահասներ, 18.000 փախստականներ: Մինչ այսօր Սումգայիթի Հայոց ցեղասպանության զոհերի ճշգրիտ թիվը պարզված չէ. ցեղասպանության ենթարկվածների թիվը հասնում է հազարի, որոնց աճյունները մինչեւ օրս էլ հայտնաբերվում են Սումգայիթի արվարձաններում նոր շինարարություն կատարելիս:

Հիմա էսօրվա իշխանությունը, որ առավոտ բարլուսով շնչակտուր ընկնում է ու մարտի 1-ի՝ իրենց կազմակերպած խուլիգանության արդյունքում զոհերի է հիշում, էդ 2 օր առաջ հայ ազգի դեմ հերթական ցեղասպանության տարելիցը ինչի՞ չի հիշում:

Ասեմ՝ ինչու չի հիշում: Որովհետեւ Սումգայիթ հիշել, սգալ ու դատապարտելը ունի հասցեատեր՝ Իլհամ Ալիեւն է, որից վախենում են, նրան բան չեն ասում, որովհետեւ կզրկվեն իշխանությունից:

Իսկ մարտի 1-ը, հակառակը, այդ օրը շահարկելով ու մարդկանց հույզերի վրա խաղալով եկել են իշխանության: Իրենք շնորհակալ են մարտի 1-ի զոհերից, դրա համար էլ առավոտ բարլուսով գնումկանգնում, ճառեր են ասում, խաչակնքվում, խոնարհվում, մտքերում ասում, որ երախտապարտ են, իսկ Սումգայիթյան տարելիցին ամեն ինչից կխոսեն, հաթաթաներ կտան բոլորին, բացի ադրբեջանցի մարդասպաններից ու նրանց ղեկավարներից:

Վերջին տարիներին՝ մեր գլխին եկածը բացահայտվելուց հետո, կարող է արդեն մարտի 1-ը ոչ թե ոճրագործության օր հիշվել հայոց պատմության մեջ, ոչ թե իրենց հռչակած կորսված գարնան առաջին օր, այլ կհիշվի որպես հայրենիքի պաշտպանության օր, ազգային պաշտպանության օր, 2020-ից ի վեր մեր ապրած աղետը 10 տարով հետաձգելու օր: Կարող է բացահայտվել, որ այդ զոհերը խուլիգանության կազմակերպիչները տվեցին իրենց նպատակին հասնելու համար, բայց օրվա իշխանությունը կարողացավ կանխել այն, ինչը չկարողացավ կանխել 2018թ.-ին»:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՁԵՎԱՉԱՓԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

**Հայաստանի խորհրդարանի իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ողջունում է Հայաստան-Ադրբեջան բանակցությունների վերականգնումը:**

Այս մասին ասաց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, պետահրավական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը՝ պատասխանելով հարցին, թե Մյունխենում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ կայացած հանդիպման եւ Բեռլինում Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի միջեւ կայացած բանակցությունների համատեքստում արդյոք կարող են արձանագրել, որ Ադրբեջանը վերադառնում է բանակցությունների արեւմտյան հարթակին, եւ այս դեպքում Գերմանիան հանդիսանում է որպես միջնորդ, եթե ոչ, ապա կարող են արդյոք արձանագրել, որ Հայաստանն է համաձայն երկկողմ բանակցությունների, իսկ Գերմանիան այս դեպքում ոչ թե միջնորդ է, այլ հարթակ այդ բանակցությունների համար:

«Պետք է ողջունենք Ադրբեջան-Հայաստան բանակցությունների ձեւաչափի վերականգնումը: Սա չափազանց կարեւոր է հետագա գործընթացները ծավալելու համար: Հանդիպումները շարունակվում են, եւ դա շատ դրական նշան է»,- պատասխանեց Վարդանյանը:

Ճշգրտող հարցին՝ ամեն դեպքում, որ ձեւաչափն են ավելի ճիշտ համարում, պատասխանեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որն ասաց, որ արդյունավետ են համարում բոլոր այն հարթակները, որտեղ կհարգվեն եւ կպաշտպանվեն արձանագրված սկզբունքները:

«Այս իմաստով Գրանադայում տեղի ունեցած հանդիպման ընթացքում երկրները, այդ թվում՝ Գերմանիան, ստորագրել են փաստաթղթի տակ, որտեղ արձանագրվել են այդ սկզբունքները, եւ, բնականաբար, ողջունում ենք ցանկացած հարթակ, որտեղ այդ սկզբունքները հարգվում են: Մենք արդյունավետ ենք համարում այդ բանակցությունները եւ ողջունում ենք ցանկացած ձեւաչափի քննարկումները, որոնք տանում են դեպի խաղաղության մեր տարածաշրջանում»,- ընդգծեց Հովհաննիսյանը:

Փետրվարի 19-ին Մյունխենում կայացել էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի միջնորդությամբ: Հանդիպումից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարել էր, որ հանդիպման ժամանակ պայմանավորվել են շարունակել բանակցությունները, եւ առաջիկայում նախատեսվում են հանդիպումներ երկու երկրների ԱԳ նախարարների եւ փոխվարչապետերի մակարդակով: Փետրվարի 28-ին եւ 29-ին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում բանակցություններ են վարել Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները, բանակցությունները հյուրընկալել էր Գերմանիայի ԱԳ նախարար Անալենա Բերբոքը:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

# 3 ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐՈՎ

**Փետրվարի 29-ին դանակահարություններ են տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Էրեբունու բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նուբարաշեն վարչական շրջանում մի խումբ անձանց միջեւ վեճ է տեղի ունեցել, որի ժամանակ 3 հոգի դանակահարվել է:**

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Նուբարաշեն են մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Պետրոսյանի, բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Սենիկ Երանոսյանի եւ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Սամվել Մամիկոնյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի եւ վաշտի հրամանատար Վլադիմիր Դերձյանի գլխավորությամբ:

Ոստիկանների եւ պարեկների այսքան շատ ժամանման պատճառը նրանում է, քանի որ կարճ ժամանակ անց «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ մարմնական վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել 3 քաղաքացի:

Էրեբունու ոստիկանները կարճ ժամանակում պարզում են, որ նրանք տեղափոխվել են Նուբարաշեն վարչական շրջանից:

Հիվանդանոց մեկնած ոստիկանության Նուբարաշենի բաժանմունքի ծառայողներին՝ բաժանմունքի պետ Կարեն Հովհաննիսյանի գլխավորությամբ, բժիշկները հայտնում են, որ վիրավորները գտնվում են հետազոտման մեջ եւ չեն կարող կատարվածի մասին բացատրություններ տալ:

Մինչ բժիշկները վիրավորներին օգնություն էին ցուցաբերում, ոստիկանության Էրեբունու բաժնի, ոստիկանության Նուբարաշենի բաժանմունքի եւ ՊԾ Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի պարեկները պարզել են, որ վիրավորները Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ 21-ամյա Մանվել Հ.-ն է, 21-ամյա Սամվել Պ-ն է եւ 24-ամյա Արթուր Գ-ն:

Նշված անձինք եղել են Էրեբունի բժշկական կենտրոնում, իսկ այնուհետեւ նրանք տեղափոխվել են «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն:

«Էրեբունի» եւ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնների բժիշկների շնորհիվ նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Ոստիկաններն ու պարեկները, չունենալով հստակ դեպքի վայր, Նուբարաշենի վարչական տարածքում մի քանի ժամ շարունակ հետախուզական աշխատանքներ են կատարել, ի վերջո պարզվել են դեպքի որոշ հանգամանքներ, ինչպես նաեւ դեպքի վայրը, որտեղ հայտնաբերվել են արնանման հետքեր:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ երեկ ժամը 20:30-ի սահմաններում, Նուբարաշեն 11 փողոցի վերջնամասում Սամվել Հ.-ն ավտոմեքենան կանգնեցնելու հարցի շուրջ վիճաբանել է Նուբարաշենի բնակիչ 17-ամյա Հայկ Փ.-ի հետ, որից հետո՝ արդեն ժամը 21:00-ի սահմաններում, վերջիններիս միջեւ վիճաբանությունը շարունակվել է արդեն Նուբարաշենի 9-րդ փողոցում գործող ավտոլվացման կետում, իսկ արդեն 22:00-ի սահմաններում Նուբարաշենի 6-րդ փողոցի 130 շենքի բակում Սամվել Հ.-ի հոր՝ Արման Հ.-ի հետ վիճաբանել են Մանվել Հ.-ն, Սամվել Պ-ն եւ Արթուր Գ-ն, որի ժամանակ Սամվել Հ.-ն իր մոտ գտնվող դանակով հարվածել եւ մարմնական վնասվածքներ է հասցրել նշված անձանց:

Ահազանգով դեպքի վայր են ժամանել ՀՀ քննչական կոմիտեի Երեւանի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի խումբը՝ բաժնի պետ Համբարձում Պողոսյանի գլխավորությամբ:

Դեպքի փաստով Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, քննիչի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, ոստիկանները հայտնաբերել են կասկածյալ Սամվել Հ.-ին եւ տեղափոխել ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղից էլ նրան ներկայացրել են Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Դեպքի փաստով նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԿԱ ՄԵԿ ՏՈՒԺԱԾ

# ՇՂԹԱՅԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

**Փետրվարի 29 խոշոր ու շղթայական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:00-ի սահմաններում Իսակովի պողոտայում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերի հարեւանությամբ, բախվել են «Mercedes G», «Mercedes C», «Mercedes E», «Toyota Camry», «Hyundai Elantra» եւ «Renault Logan» մակնիշի ավտոմեքենաները:**

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 1 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Աստղիկ» բժշկական կենտրոն: Բախման հետեւանքով ճանապարհը մասամբ դարձել է դժվարանցանելի:

Օպերատիվորեն ժամանել են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գնդի ծառայության գծով ավագ տեսուչ Հարություն Գրիգորյանի, գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի գլխավորությամբ: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Արտյոմ Չոբանյանն ու Գոռ Մելքումյանը:

Վթարի մասին ՊԾ Երեւան քաղաքի գնդից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Գոռ Թադեւոսյանի եւ քննիչ Մակար Միրզայանի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են վարորդների եւ վիրավորի ինքնությունը:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ ասում էին, որ վթարի մեղավորը եղել է «Mercedes»-ներից մեկի վարորդը, իսկ «Mercedes G»-ն վարել է Ազգային ժողովի պատգամավորներից մեկի մերձավորը:

ՀԵՏԸՆԹԱՑ

## ՈՉ ՍՐՏԱՑԱՎ ՄՈՏԵՑՈՒՄ

Վերջին տարիներին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Շենգավիթի բաժինը, կարելի է ասել, հետընթաց է գրանցել բոլոր հանցատեսակների դեմ պայքարում, ու պատճառներից մեկը բաժնում որոշ պաշտոնյաների ոչ սրտացավ մոտեցումն է համակարգի նկատմամբ: Եթե նախկինում Շենգավիթի բաժինը համարվում էր ոստիկանության առաջամարտիկներից, ապա հիմա համարվում է ոստիկանության «ուռուցքը», «կույր աղիքը», ու դրա վառ ապացույցը փետրվարի 29-ին Շենգավիթի վարչական տարածքում տեղի ունեցած սպանությունն է, որը բաժնի պետ «մեծն» Անդրանիկ Շահբազյանը, որը սիրում է տարբեր տեղերում տարածել, թե իր թիկունքին կանգնած է վերջերս գեներալ դարձած ինչ-որ պաշտոնյա, բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, Մարգար Աղա անունը ստացած Մարգար Ներսիսյանը փորձում էին կոծկել:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ փետրվարի 29-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նոր Խարբերդի 24-րդ փողոցի տներից մեկում սպանություն է տեղի ունեցել: Ահազանգը փոխանցվում է ոստիկանության Շենգավիթի բաժին, որտեղից էլ նշված հասցե են ժամանում ոստիկանության Շենգավիթի բաժնի պետ Անդրանիկ Շահբազյանն ու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Մարգար Ներսիսյանը: Արդեն տեղում, դեռ դատաբժիշկը դին չզննած, բաժնի պետն ու օպերգծով տեղակալը իրենց դնում են Շերլոկ Հոլմսի տեղը ու հայտարարում, թե՝ ոչ, տեղի ունեցածը սպանություն չէ, այլ հանկարծամահություն, ու փորձում են ներկաների «ականջներին լափշա կախել», թե մահացածը տարիքով կին էր, դրա համար էլ հանկարծամահ է եղել: Ահազանգով ժամանում են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնի խումբը, եւ քննիչները ցուցաբերում են պրոֆեսիոնալիզմ ու տեղում պարզում, որ տեղի ունեցածը ոչ թե հանկարծամահություն է, այլ սպանություն, ու մինչ Շենգավիթի «մեծն» բաժնի պետը եւ «միջնեկ» օպերգծով տեղակալը «լոլո են կարդում» ու փորձում են դարձյալ համոզել, որ տեղի ունեցածը հանկարծամահություն է, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու կասկածանքով ձերբակալում են մահացածի՝ 74-ամյա Սուսաննա Պ.-ի որդուն՝ 53-ամյա Գեւորգ Ե.-ին, ում սպանություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկում ոստիկանության Շենգավիթի բաժին: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դեմքի եւ գլխի հատվածում հայտնաբերվել են վնասվածքի հետքեր: Քննիչի որոշմամբ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Կասկածյալը ոստիկանության Շենգավիթի բաժնից ներկայացվել է Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 29-ից մարտի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԿԱՅՔԸ ՉԻ ԹԱՐՄԱՑՎՈՒՄ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում վերջին նորությունը տեղադրվել է ավելի քան երկու ամիս առաջ՝ 2023թ. դեկտեմբերի 27-ին. այդ տեղեկությունն էլ սեփական չէ, այլ «Վեոլիա ջուր» ընկերության հայտարարությունն է Դիլիջանում ջրամատակարարումը ժամանակավորապես անջատելու մասին: Դիլիջանի համայնքապետարանի կայքում տարին չի փոխվել, կարծես 17 հազար բնակիչ ունեցող՝ զբոսաշրջային Դիլիջան քաղաքում եւ Դիլիջան համայնքի 6 գյուղերում անցած ավելի քան երկու ամսվա ընթացքում ոչ մի իրադարձություն տեղի չի ունեցել: Դիլիջանի բնակիչներից տեղեկացա, որ Դիլիջանի համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Արփի Թամրազյանն ամուսնացել, բալիկ է ունեցել, ներկայումս խնամում է փոքրիկին: Նրա անունը ներկայումս բացակայում է համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված՝ համայնքապետարանի աշխատակազմի անդամների ցանկից: Համայնքապետարանի մամուլի քարտուղարը ֆիզիոլոգիական արձակուրդում է, ինչո՞ւ նրա փոխարեն ժամանակավորապես աշխատող չեն ընդունել, որպեսզի նա համայնքապետարանի կայքը նորություններով թարմացնի: Դիլիջանի համայնքապետարանի կայքում շատ ակտիվորեն, մեծ արագությամբ լրացվում է համայնքի ղեկավարի կայացրած որոշումների բաժինը: Համայնքի ղեկավարի որոշումների մեծամասնությունը վերաբերում է հողերի վաճառքին, հողամասերի տերերին, ընդլայնման նպատակով, ուղիղ վաճառքով օտարվող հողերին եւ այլն: Մինչեւ 2018 թվականի հեղափոխությունը բենզալցակայանում որպես լիցքավորող աշխատած, Դիլիջանի պետական քոլեջի շրջանավարտ, այժմ Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, անձնական գործում իր սեռը «արու» գրած Դավիթ Սարգսյանի որոշումներով համայնքի հողերը ձեւական աճուրդներով, շուկայականից էժան գներով օտարվում են ոչ միայն Դիլիջան համայնքի, այլեւ Երեւանի, Վանաձորի. Իջեւանի բնակիչների: Այդ ձեւական աճուրդների հետեւանքով համայնքի բյուջե չեն մտնում հարյուրավոր միլիոն դրամներ: Դիլիջան քաղաքի ավտոկայարանի հարակից տարածքից, միջպետական մայրուղուց դեպի Դիլիջանի համայնքապետարանի շենք բարձրացող ճանապարհի ոլորաններից մեկում տեղադրված է հողի վաճառքի հայտարարություն. Դիլիջան քաղաքի կենտրոնում վաճառվում է 408 քառակուսի մետր հող,գինը՝ 460 հազար դոլար: Գրված է նաեւ վաճառողի անունը եւ բջջային հեռախոսահամարը: Ահա այսպիսի բարձր են Դիլիջան քաղաքի հողերի շուկայական գները, մինչդեռ ՔՊ-ական համայնքապետը մեծ թափով համայնքի հողերն օտարում է շուկայականից շատ ցածր գներով: 2024 թվականին 1 միլիարդ 471 միլիոն 748 հազար 150 դրամ բյուջե ունեցող համայնքում այդպես էլ չեն լուծվում Դիլիջանի շատ փողոցների նորոգման, պատշաճ աղբահանության, թափառող, անտեր, ագրեսիվ շների վնասազերծման եւ բազում այլ հարցեր:

*ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

«ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ»

# ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ԿԱՐԵՎՈՐ

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ընդունել է Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արդէ Հովսափյանը, ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, նախարարության այլ ներկայացուցիչներ:**

Ինչպես տեղեկացանք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, Մայքլ Քոնոլին Հայաստան է ժամանել ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրման հարցում Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի աշխատանքներին ծանոթանալու, ինչպես նաեւ «Դասավանդում հանուն հաջողության» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով: Համաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել Երեւանի եւ ՀՀ մարզերի՝ անգլերեն դասավանդող ավելի քան 800 ուսուցիչներ: Ընդ որում՝ հայտատուների շուրջ 50%-ը ՀՀ մարզերից է:

Ըստ աղբյուրի՝ ողջունելով հյուրերին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարեւորել է երկկողմ համագործակցությունը, ինչպես նաեւ առաջիկա համաժողովի անցկացումը: «Այն երկու հիմնական ուղղությունները, որոնցով մենք համագործակցում ենք Բրիտանական խորհրդի հետ անգլերենի ուսուցիչների կարողությունների զարգացման եւ, առհասարակ, ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի մշակման տեսանկյունից մեզ համար շատ կարեւոր են: Երկու ուղղություններով էլ բավականին լավ արդյունքներ ենք գրանցում»,- ասել է Արաքսիա Սվաջյանը՝ ընդգծելով, որ Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերը համահունչ են «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման ծրագրին»:

«ՀՀ կրթական բոլոր մակարդակներում, հատկապես՝ հանրակրթության ոլորտում, բազմաթիվ մեծածավալ բարեփոխումներ են տեղի ունենում՝ թե՛ կրթության բովանդակության, թե՛ ենթակառուցվածքների, թե՛ ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման, թե՛ դպրոցների կառավարման եւ ֆինանսական համակարգի բարելավման տեսանկյունից: Բնականաբար, լավագույն փորձի տեղայնացումը մեզ համար կարեւոր ճանապարհ է»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նշվում է, որ, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլն ընդգծել է՝ Հայաստանի հետ համագործակցության հաջողված փորձը կարող է որպես մոդել դիտարկվել այլ երկրների կողմից: «Հայաստանի կառավարության եւ Բրիտանական խորհրդի միջեւ երկարաժամկետ համագործակցության մակարդակը լավագույն օրինակներից է, որը մենք ցանկանում ենք կիսել ամբողջ աշխարհի հետ: Հայաստանը հիանալի գործընկեր է հատկապես այն առումով, որ ոչ միայն զբաղվում է կրթական բարեփոխումների մշակմամբ, այլեւ աշխատում է դրանք կյանքի կոչելու ուղղությամբ: Ընդ որում՝ խոսքը ռազմավարական շատ հավակնոտ ծրագրի մասին է»,- ասել է Մայքլ Քոնոլը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության տեղեկացմամբ՝ անդրադառնալով ՀՀ-ում իրականացվող կրթական բարեփոխումներին՝ Արաքսիա Սվաջյանը ներկայացրել է նաեւ Համաշխարհային բանկի կողմից հանրակրթության պետական չափորոշչի՝ Տավուշի մարզում փորձարկման արտաքին գնահատման արդյունքները: «Տավուշի մարզում նոր չափորոշչի ներդրման շրջանակում մենք երկու տարվա ընթացքում սովորողների մոտ կրթության դինամիկայում 6 ամսվա աճ ենք գրանցել: Սա մեզ համար շատ կարեւոր ցուցանիշ է: 2015 թվականին մարդկային կապիտալի գնահատման շրջանակում հետազոտությունները ցույց են տվել, որ 12-ամյա կրթության ընթացքում մեր սովորողները ձեռք են բերում 8 տարվա գիտելիքներ: Մնացած 4 տարիներն այնքան էլ արդյունավետ չեն անցնում դպրոցներում: Մեր կողմից նախաձեռնված այս գործողությունները հստակ կանոնակարգելու եւ ճիշտ ընթացքով իրականացնելու դեպքում կարող ենք կրճատել այն բացը, որն այժմ ունենք հանրակրթական դպրոցներում»,- ընդգծել է Արաքսիա Սվաջյանը:

Նշվում է նաեւ, որ Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլը փաստել է՝ մի պայմաններում, երբ ամբողջ աշխարհը քննարկում է, թե համավարակի հետեւանքով յուրաքանչյուր երկիր դպրոցական համակարգում քանի ամսվա կամ նույնիսկ տարվա կորուստ է ունեցել, Հայաստանում գրանցված 6 ամսվա աճը, իսկապես, տպավորիչ է:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկկողմ համագործակցության այլ հեռանկարներ, մասնավորապես՝ ուղղված ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, նախագծային ուսուցմանն ու դպրոցների կառավարման բրիտանական փորձի ուսումնասիրությանը:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՁԵՎԱԿԱՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ

**Հայաստանի գլխավոր դատախազությունը հաղորդագրություն է տարածել՝ հայտնելով, որ Արարատի մարզի բնակավայրերից մեկի ղեկավարը 2012 թվականին կենցաղի տունը շուկայականից ցածր գնով վաճառել է իր աներոջը, այնուհետեւ առուվաճառքի ձեւական պայմանագրով գույքը վաճառվել է համայնքի ղեկավարի կնոջը: Դատախազության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ դատախազը գործն ուղարկել է դատարան:**

«Գլխավոր դատախազությունը 2023 թվականի դեկտեմբերի 18-ին տեղեկացրել էր, որ հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակավայրերից մեկի ղեկավարի եւ վերջինիս կնոջ հոր նկատմամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող կենցաղի տան շենքը վատնման եղանակով հափշտակելու, իսկ հետագայում հանցավոր ճանապարհով ստացված խոշոր չափերով գույքն օրինականացնելու համար:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում փողերի լվացմանն օժանդակելու համար հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաեւ բնակավայրի ղեկավարի կնոջ նկատմամբ:

Դատախազը 2024 թվականի մարտի 1-ին հաստատել է համայնքի ղեկավարի, վերջինիս կնոջ եւ աներոջ վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ քաղաքացին, 2005 թվականից մինչ օրս զբաղեցնելով Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակավայրերից մեկի ղեկավարի պաշտոնը, 2012 թվականին շուկայականից էականորեն ցածր գնով համայնքի հաշվեկշռում գտնվող կենցաղի տան շենքը վաճառել է իր աներոջը: Վերջինս տարիներ անց ձեւական առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով գույքը վաճառել է իր դստերը՝ բնակավայրի ղեկավարի կնոջը»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԼՌԵՑՆԵԼ

Բնապահպան ակտիվիստների ճնշման նոր ձեւաչափ. բնապահպան Օլեգ Դուլգարյանն ահազանգում է, որ ՀՊՄԿ-ն իր դեմ 6 միլիոն դրամի հայց է ներկայացրել դատարան եւ փորձում է լռեցնել:

Այս մասին տեղեկանում ենք «Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Օլեգ Դուլգարյանի ֆեյսբուքյան էջից:

«Հայաստանում բնապահպանական ակտիվիստների, իրավապաշտպանների նկատմամբ հանքարդյունաբերական ընկերությունների կողմից զրպարտության մեղադրանքով քաղաքացիական հայցեր դատարան ներկայացնելու գործընթացը շարունակվում է՝ ձեռք բերելով նորագույն երանգներ:

Դատարաններ հայցեր ներկայացնելը բնապահպանական ակտիվիստների եւ իրավապաշտպանների նկատմամբ արդեն մի քանի անգամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները եւ միջազգային իրավապաշտպան ցանցերը որակել են ճնշման մի ուրույն ձեւաչափ, հետապնդում, այն է՝ դատական գործերով էկո-ակտիվիստներին եւ հանքարդյունաբերության ազդակիր համայնքների բնակիչներին լռեցնելու փորձ:

Հերթը հասավ ինձ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որը ռուսական «Գեոպրոմայնինգ» ընկերության խմբի ակտիվներին է պատկանում, եւ որի բաժնետեր է հանդիսանում նաեւ ՀՀ կառավարությունը, քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան՝ պահանջելով իմ կողմից հերքում եւ բռնագանձում 6 000 000 ՀՀ (6 մլն) դրամ (մոտ 14 000 եվրո):

Նման գործընթացները բնորոշ են միայն ոչ ժողովրդավարական երկրներին եւ հասարակություններին:

Վստահ եմ՝ Ռուսաստանում եւս ժամանակին ազատ խոսքի եւ ակտիվիստների նկատմամբ ճնշումները մեկնարկել են իրավապաշտպանների նկատմամբ քաղաքացիական հայցեր ներկայացնելով, իսկ հետո եւ հիմա արդեն քրեական գործերով եւ մի քանի տարի ազատազրկմամբ:

Առհասարակ, նման գործընթացներն ուժեղացնում են մեզ. վստահ եմ՝ սա այդ դեպքերից է:

Հիշեցնեմ, որ նույն ընկերությունը 2023 թվականին հայց էր ներկայացրել նույն պահանջներով նաեւ բնապահպանական ակտիվիստ եւ լրագրող Թեհմինե Ենոքյանի նկատմամբ:

Վստահ եմ, որ քաղաքացիական հասարակությունը եւ միջազգային հանրությունը կտան իրենց գնահատականը այս գործընթացներին:

Ժողովրդավարությունը եւ սոցիալական արդարությունը Հայաստանում այլընտրանք չունեն»,- գրել է Դուլգարյանը:

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՑՈՒՑԱՆԻՇ

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

**Միջազգային փորձագետներն աննախադեպ են համարել Տավուշի մարզում հանրակրթական պետական չափորոշչի փորձարկման արդյունքում արձանագրված ցուցանիշը:**

Այս մասին հայտնեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ հավելելով, որ Տավուշի մարզում դեռ 2021 թվականից են մեկնարկել հանրակրթության պետական չափորոշչի փորձնական ներդրման աշխատանքները:

«Մեզ համար շատ կարեւոր էր հասկանալ, թե ինչ արդյունքներ է ապահովում նոր չափորոշիչը, եւ արդյոք այն հնարավորություն է տալիս կրթության որակական փոփոխություններ գրանցել: Քանի որ հատկապես ԲՏՃՄ (բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկա) առարկաների մասով նոր չափորոշչի թե՛ մշակման եւ թե՛ փորձարարական ներդրման ծրագիրն իրականացվել է Եվրամիության եւ Համաշխարհային բանկի աջակցությամբ, վերջինիս կողմից նախաձեռնվել էր երկամյա փորձարարական ներդրման արդյունքների գնահատման գործընթաց միջազգային անկախ փորձագետների կողմից: Մենք բոլորս անհամբեր սպասում էինք այդ անկախ զեկույցի հրապարակմանը եւ դրա արդյունքներին:

Մեզ համար շատ ոգեւորիչ արդյունքներ են գրանցվել, որովհետեւ երկու տարվա ընթացքում, ի համեմատ մյուս մարզերի դասարաններում սովորող երեխաների, Տավուշի մարզի երեխաների մոտ վեց ամսվա տարբերությամբ ավել դինամիկա է գրանցվել»,-մանրամասնել է Սվաջյանը:

Նրա խոսքով՝ հետազոտությունը, որն իրականացվել է Հայաստանում մարդկային կապիտալի, ինչպես նաեւ կրթության ուղղությամբ, ցույց է տվել, որ 12-ամյա կրթության ընթացքում երեխաներն արդյունավետ օգտագործում են իրենց 8 տարին:

Տավուշի մարզի փորձարկումը ցույց է տվել, որ երկու տարվա ընթացքում 6 ամսվա չափով աճ է գրանցվել սովորողների մոտ, ինչը, միջազգային փորձագետների հավաստիացմամբ, աննախադեպ ցուցանիշ է, քանի որ բոլոր այն երկրները, որտեղ առաջընթաց է գրանցվում, ըստ փորձագետների, այդ ցուցանիշը մոտ երեք ամսվա է ակնկալվում:

Փոխնախարարն ընդգծել է, որ համավարակի, պատերազմական եւ հաջորդած դժվարին իրավիճակի ընթացքում մշակված եւ իրականացված ծրագրի նման արդյունքն իրականություն է դարձել ԿԳՄՍ նախարարության, ուսուցիչների շնորհիվ, միջազգային փորձագետների ու գործընկերների աջակցությամբ:

«Իհարկե, սա ոգեւորում է, բայց մենք չենք կարող հանգիստ լինել եւ մտածել, որ մեզ մոտ աճ է գրանցվում, նշանակում է ամեն ինչ լավ է: Այդ վերլուծությունը վկայում է նաեւ այն մասին, որ այստեղ հետեւողական, մանրամասն աշխատանք է անհրաժեշտ իրականացնել: Տավուշի մարզում մենք ունենք այս հաջողությունը, որովհետեւ մեծածավալ դասընթացներ են իրականացվել, բնագիտական լաբորատորիաներով են ապահովվել դպրոցները, այսինքն՝ բոլոր այն գործոնները, որոնք անդրադառնում են կրթության որակի վրա, մենք փորձել ենք ապահովել»,-ասաց Սվաջյանը՝ ավելացնելով, որ այժմ նոր չափորոշչի ներդրման գործընթացն իրականացվում է հանրապետության բոլոր մարզերի դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում, եւ հետեւողական աշխատանքներ են տարվում բոլոր ուղղություններով, որպեսզի աճ գրանցվի նաեւ այս կրթօջախներում:

Մյուս ուսումնական տարում չափորոշիչը կներդրվի նաեւ 3-րդ, 6-րդ, 8-րդ եւ 10-րդ դասարաններում եւ հաջորդաբար արդեն մյուս դասարաններում եւս:

Սվաջյանը նշեց, որ այս տարի Տավուշի մարզում նոր կրթական չափորոշչով ավարտող սովորողներ կան 4-րդ, 9-րդ, 10-րդ դասարաններում, եւ աշխատանքներ են իրականացվում, որպեսզի նրանց կրթական մակարդակի ատեստավորման գործընթացը համապատասխան ձեւաչափով իրականացվի:

«Օրինակ՝ նոր չափորոշչի ներդրման կարեւոր բաղադրիչներից մեկը երեխաների հետազոտական, ստեղծագործական քննադատական մտածողության զարգացումն է: Տավուշի մարզում բնագիտական առարկաների քննությունը, որը ստանդարտ թեստի միջոցով էր, մենք հիմա հնարավորություն ենք տվել երկու ձեւով իրականացնել. մի դեպքում սովորողները կարող են ընտրել նախագծային աշխատանք, ինչը նաեւ հնարավորություն է տալիս ինտեգրել գիտելիքները, միջառարկայական կապեր ստեղծել եւ իրենց հետազոտությունները կատարել մի քանի առարկայի շրջանակում, մյուս կողմից՝ կրկին թեստային ճանապարհով առաջարկվում է սովորողների գիտելիքների ստուգում իրականացնել ոչ միայն տեսական հարցերով, այլ շուրջ 20-30 տոկոսը կլինեն գործնական առաջադրանքներ՝ կապված լաբորատոր աշխատանքների հետ»,-պարզաբանեց մեր զրուցակիցը՝ հայտնելով, որ հնարավորություն է ընձեռվելու մասնակցել թե՛ նոր, թե՛ հին ձեւաչափով քննությունների: Բացի այդ, երկու քննություններից որպես ընդունելության ցուցանիշ կպահպանվի այն գնահատականը, որն ավելի բարձր է:

Անդրադառնալով նոր չափորոշչի ներդրման համար ուսումնանյութական բազայի առկայության հարցին՝ Սվաջյանը նկատեց, որ նոր չափորոշիչը պահանջում է ոչ միայն միջավայրային պայմանների, ուսումնալաբորատոր բազայի ապահովում:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՄԱՐՏԻ 1

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» խմբակցությունների անդամները ծաղիկներ են խոնարհել «Ազդեցություն եւ հակազդեցություն» հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով 2008 թ. մարտի 1-ի զոհերի հիշատակին: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:**

«Երեւանի կենտրոնում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններն այլեւս երբեք չեն կրկնվելու, ժողովրդի քվեն մշտապես պաշտպանվելու է, եւ մեր պետությունը շարունակելու է իր անկախ, ինքնիշխան ընթացքը՝ հանուն Հայաստանի Հանրապետության երջանիկ ապագայի:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» խմբակցությունների անդամների հետ ծաղիկներ խոնարհեցինք Գրիգոր Լուսավորիչ փողոցին հարակից այգում կանգնեցված «Ազդեցություն եւ հակազդեցություն» հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով 2008 թվականի մարտի 1-ի զոհերի հիշատակին»,- գրել է Ավինյանը:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՆՈՐ ՖԻԼՄ

# ՉԳՏԵԼ ԵՆ ՉՈՒՌՃԱՑՆԵԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

**«Բարի օր» ֆիլմի գլխավոր հերոսը՝ Հենդրիկը, տխուր վարորդ է, որն աղրում է սովորական կյանքով, իր հոգսերով, առօրյայով: Մի առավոտ նա զարգում է, որ օրը չի փոխվել. հոկտեմբերի 14-ն է, ինչպես եւ երեկ էր: Դա տեւում է շուրջ տասը տարի: Տարիների ընթացքում Հենդրիկի արժեհամակարգում որոշ փոփոխություններ են կատարվում. նա սկսում է գնահատել ոչ միայն մորը, այլեւ կնոջն ու երեխաներին, հրաժարվում է կարծրատիպերից, որոնք ուղեկցել են նրան ամբողջ կյանքի ընթացքում:**

Կինոնկարը, որը զվարճալի է եւ ստիպում է կողքից նայել անընդունելի երեւույթներին ու ձերբազատվել դրանցից, փետրվարի 29-ին բարձրացավ մեծ էկրան: Ֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ «Մոսկվա» կինոթատրոնում:

Մինչ կարմիր գորգի արարողությունը լրագրողների հետ զրույցում ֆիլմի ռեժիսորներներից Գրիգոր Գասպարյանն ասաց՝ գաղափարի հեղինակը ֆիլմի պրոդյուսեր Ամարաս Գասպարյանն է: «Կա մի սիրված ֆիլմ՝ «Արջամկան օրը», որը նկարահանվել է երեսուն տարի առաջ: Այդ կինոնկարից հետո ստեղծվել են մոտ 12 կամ ավելի նմանատիպ ֆիլմեր, որոնցում օգտագործվում է այդ ֆիլմի շարժիչը, որը կոչվում է «Time loop», երբ գլխավոր հերոսի կյանքում օրը կամ ինչ-որ ժամանակահատված կրկնվում է: «Բարի օր» ֆիլմի գլխավոր հերոսի դերակատար Մհեր Մխիթարյանը ստեղծել էր տաքսիստ Հենդոյի կերպարը, որը շատ սիրվեց: Նա սքետչերի միջոցով պատմում էր իր կնոջ, երեխաների, սիրուհու, տարբեր մարդկանց մասին, որոնք չէին երեւում: Որոշեցինք լիամետրաժ ֆիլմ նկարահանել տաքսիստ Հենդոյի մասին, որտեղ կլինեն բոլոր կերպարները»,-պատմեց ռեժիսորը:

Ֆիլմի մյուս ռեժիսոր Արման Սարգսյանն էլ խոստովանեց՝ ամեն ինչ արել են համատեղ, համագործակցել են սցենարիստների հետ ու ձգտել են չուռճացնել երեւույթները: «Կարծում եմ՝ ամեն մարդու ժամանակ է հարկավոր ինքն իր հետ մնալու, վերլուծելու, թե ինչի համար է ապրում, թե ինչ է թողնում իրենից հետո, թե իր պատճառով ինչ է լինում: Ֆիլմի հերոսին այդ ժամանակը տրվում է»,-շեշտեց նա:

Դերասան Մհեր Մխիթարյանը վստահեցնում է՝ եթե ինքը հայտնվեր ժամանակավոր հանգույցի մեջ, կաներ այն բոլոր քայլերը, որ անում է իր կերտած կերպարը, ինչը կհանգեցներ նրան, որ կվերամաստավորեր իր կյանքն ու այլ տեսանկյունից կնայեր կյանքի ցանկացած իրավիճակի:

«Մեզ հաստատ հանդիպել են տաքսու վարորդներ, որ զայրացնում են իրենց բառապաշարով, երաժշտական ճաշակով, հարցերով եւ այլն: Հուսամ՝ ֆիլմից հետո ինչ-որ բան կփոխվի»,-ասաց Մխիթարյանը:

Ռոզի Ավետիսովան կերտել է Հենդրիկի կնոջ կերպարը: Նույն տեսարանում մի քանի անգամ խաղալը բոլորովին բարդ չի եղել նրա համար: Դժվար է եղել անել ամեն բան, որ մարդիկ հավատան, որ ինքը Հենդոյի կինն է, որ նման փոխհարաբերությունները ճշմարտացի են ու հնարավոր:

Ըստ դերասանուհու՝ բոլորն էլ ժամանակ առ ժամանակ վերարժեւորում են որոշ բաներ՝ կախված անձնական կյանքում, երկրում տեղի ունեցող իրադարձություններից, համընդհանուր երեւույթներից:

Կինոնկարն իրենց մասնակցությամբ հարստացնում են սկսնակ դերասաններ Նանուլն ու Վարդան Քոչարյանը: Նրանք մեծ բավականություն են ստացել նկարահանումներից ու հույս ունեն, որ կրկին կլինեն էկրանին:

«Սա իմ առաջին կինոնկարն է, եւ ես շատ ուրախ եմ, որ հենց «Բարի օր» ֆիլմում եմ նկարահանվել»,-ասաց Նանուլը:

«Նկարահանվել եմ սիթքոմում, գովազդներում: Սա իմ առաջին գեղարվեստական ֆիլմն էր: Շատ եմ դիտել նման կինոնկարներ ու հավանել եմ: Սիրեցի այս ֆիլմի սյուժեն, բայց չգիտեի, որ նման լավ դերասանների հետ եմ խաղալու: Շատ հաճելի էր»,-ընդգծեց Վարդան Քոչարյանը:

Ֆիլմում հնարավոր է տեսնել նաեւ Գարիկ Մարտիրոսյանին, Իվետա Մուկուչյանին, Արկադի Դումիկյանին եւ այլոց:

Ստեղծագործական խումբը նախատեսում է «Բարի օր» կատակերգությունը ցուցադրել ոչ միայն Հայաստանում, այլեւ երկրի սահմաններից դուրս:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

«ԱՎԵՏԻՍ»

# ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

**«Ավետիս» լարային քառյակը, որը մի քանի տարի գործունեություն է ծավալում ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում, մարտի 12-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հանդես կգա համերգով:**

«Ավետիս» (բարի լուր) անվանումն ընտրել են խմբի երաժիշտները:

Խմբի անդամների նպատակն է ձեւավորել համաշխարհային բարձր չափանիշներին համապատասխանող լարային քառյակ, որը լավագույնս կներկայացնի վերոնշյալ ժանրի համար գրված բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք ներկայումս շատ քիչ են հնչում հայաստանյան բեմահարթակներում:

Քառյակում ընդգրկված երաժիշտներից երեքը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջատար երաժիշտներ են. Կարմեն Թոսունյանը ՀԱՖՆ նվագախմբի կոնցերտմայստեր է, Հայկ Տեր-Հովհաննիսյանը՝ ՀԱՖՆ ալտերի խմբի կոնցերտմայստեր, Միքայել Նավասարդյանը՝ թավջութակների խմբի երաժիշտ: Ջութակահարուհի Անուշ Նիկողոսյանի հարուստ կենսագրությունն ու բեղուն համերգային գործունեությունը նպաստում են լարային քառյակի ակտիվ մասնակցությանը միջազգային փառատոներին եւ ելույթներին հեղինակավոր երաժշտական հարթակներում: Նախորդ տարվա ընթացքում համերգային ծրագրերով ներկայանալով ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ քառյակն արժանացել է անվանի երաժիշտների եւ երաժշտաքննադատների բարձր գնահատանքին՝ ստանալով նոր համագործակցության հրավերներ:

Մայիսին «Ավետիս» լարային քառյակը կմասնակցի Իտալիայի Մանտովա քաղաքի ամենամյա «Trame Sonore» հեղինակավոր փառատոնին՝ներկայացնելով նաեւ Էդվարդ Միրզոյանի լարային քառյակը: Քառյակը մեծ ուշադրություն է հատկացնում նաեւ կրթական ծրագրերին՝ ընդգրկելով հանդիսատեսի թվում դպրոցականներին:

Մարտի վերջին նախատեսվում է այդպիսի ծրագրերից մեկն իրականացնել Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում: Քառյակը գործունեություն է ծավալում նաեւ Հայաստանի մարզերում՝ կարեւորելով մարզային ծրագրերի նշանակությունը, մարզերում մշակութային գործընկերության զարգացումը:

Ապրիլի 24-ին Էջմիածնի Կոմիտասի անվան մշակույթի պալատում քառյակը հանդես կգա Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին նվիրված համերգով:

ՄԱՐՔԱԿԱՆ

## ՄԱՐՏԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Շախմատի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻԴԵ-ն, հրապարակել է մարտ ամսվա դասակարգման աղյուսակը: Տղամարդկանց դասակարգման աղյուսակում Հայաստանն ունի 4 ներկայացուցիչ: Հայկ Մարտիրոսյանը 49-րդ հորիզոնականում է, Գաբրիել Սարգսյանը՝ 61-րդ, Սամվել Տեր-Սահակյանը՝91-րդ, Հրանտ Մելքումյանը՝ 98-րդ: Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը, որն այժմ հանդես է գալիս ԱՄՆ դրոշի ներքո, դասակարգման աղյուսակում 26-րդն է: Կանանց վարկանիշային աղյուսակում Էլինա Դանիելյանը 51-րդ տեղում է, Լիլիթ Մկրտչյանը՝73-րդ, Աննա Սարգսյանը՝ 75-րդ, Մարիամ Մկրտչյան՝99-րդ:

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը եւ ռուս թենիսիստ Անդրեյ Ռուբլյովը բարեգործական խաղ կանցկացնեն, որի հասույթը կտրամադրվի արցախահայությանը: Նախաձեռնության հեղինակը ՀՄԸՄ Գլենդելի «Արարատ» մասնաճյուղն է: Բարեգործական խաղը կկայանա ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում մարտի 16-ին: Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 15-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ, եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակիչից:

## ԱՄՓՈՓԵԼ ԵՆ

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները՝ Արթուր Դավթյանը եւ Վահագն Դավթյանը, ամփոփել են աշխարհի գավաթի խաղարկության երկու փուլերի արդյունքները: «Իսկապես դժվար է անընդհատ ոսկե մեդալ նվաճել, քանի որ դրա համար անդադար լավ մարզավիճակում պետք է լինես: Ես տեւական ժամանակ բուժվում էի վնասվածքից: Այս հավաքի ժամանակ միայն մի քիչ ուշ հաջողվեց մարզավիճակս կարգի բերել, բայց հաղթանակը հեշտ չի տրվում, ամեն ինչ պետք է անես երկրի պատիվը բարձր պահելու համար: Այստեղ բարդությունը նրանում է, որ դու կարողանաս ինքդ քեզ հաղթես: Այժմ վնասվածքներ չունեմ, աշխարհի առաջնությունից հետո ամբողջապես վերականգնվել եմ: Բայց սա սպորտ է, ամեն ինչ հնարավոր է »,- ասաց Արթուր Դավթյանը: Վերջինիս համար աշխարհի գավաթի խաղարկության փուլերում հիմնական մրցակիցն Ուկրաինան ներկայացնող մարզիկն էր: Հայաստանի հավաքականի անդամ, աշխարհի գավաթների խաղարկության արծաթե եւ բրոնզե մեդալակիր Վահագն Դավթյանի խոսքով՝ թե՛ Եգիպտոսում, թե՛ Գերմանիայում ինքը փորձել է առավելագույնս լավ մասնակցություն ունենալ մրցաշարին:

*●Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Զարթոնք». Պարույր Սեւակ - 100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

## ՖԻՆԱՆՍՆԵՐ

**ՀԱՐՑ. Ինչպես է ներկայացվում շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը:**

*Արտակ Գրիգորյան (31 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Շահումով խաղի կազմակերպչի կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի կամ դրանում կատարվող փոփոխությունների, լրացումների համաձայնեցումն իրականացվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Շահումով խաղի կազմակերպիչը, շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը կամ դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ՝ նախքան դրանց կիրառումը, ներկայացնելով լիազոր մարմին՝ երկու օրինակից: Լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգին, առաջարկվող փոփոխություններին, լրացումներին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի կանոնակարգի կամ փոփոխությունների, լրացումների համաձայնեցված մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման՝եթե շահումով խաղի կազմակերպչի կողմից շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների արդյունքում փոփոխվելու են N 4 ձեւում նշված՝շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները, ապա կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝համաձայն N 4 ձեւի: Շահումով խաղի կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի, այն դեպքում, երբ փոփոխվում են շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ, որոնք չեն հակասում համաձայնեցված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:**

*Ասատուր Ստեփանյան (29 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

*ՀՀ կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Ապրիլի 8-ին տեղի է ունենալու Արեգակի ամբողջական խավարում: Տեղեկությունը հայտնում է «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Ազիզյանը: Արեգակի այս խավարումը Հայաստանի տարածքում չի դիտվի:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:


Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*

*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| ☾ / ☀ | Շիրակ | -9 -12 / +4 +9 |
| ☾ / ☀ | Կոտայքի լեռներ | -8 -12 / +5 +8 |
| ☾ / ☀ | Կոտայքի նախալեռներ | -5 -8 / +8 +10 |
| ☾ / ☀ | Գեղարքունիք | -8 -13 / +3 +6 |
| ☾ / ☀ | Լոռի | -6 -10 / +8 +10 |
| ☾ / ☀ | Տավուշ | -4 -7 / +8 +11 |
| ☾ / ☀ | Արագածոտնի լեռներ | -8 -12 / +3 +6 |
| ☾ / ☀ | Արագածոտնի նախալեռներ | -5 -7 / +8 +11 |

| | | |
|---|---|---|
| ☾ / ☀ | Արարատ | -4 -7 / +11 +13 |
| ☾ / ☀ | Արմավիր | -4 -8 / +10 +13 |
| ☾ / ☀ | Վայոց ձորի լեռներ | -3 -7 / +3 +6 |
| ☾ / ☀ | Վայոց ձորի նախալեռներ | -3 -7 / +10 +12 |
| ☾ / ☀ | Սյունիքի հովիտներ | -4 -7 / +11 +14 |
| ☾ / ☀ | Սյունիքի նախալեռներ | -9 -13 / +7 +10 |
| ☾ / ☀ | ԼՂՀ | -9 -10 / +7 +9 |
| ☾ / ☀ | Երեւան | 1 -3 / +8 +10 |


Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում



Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*